



ՔԱՂԱՔԸ (ԲՆԱԿԱՎԱՅՐԸ) ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ-ՁԵՌՆԱՐԿ ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց պահեստի փոխգնդապետ Ա.Ամիրզադյանը, ՊաՀԱԿ

Աշխարհագրային ստորաբաժանումների (ռազմականացված ջոկատների) խնդիրը հակառակորդին ճակատային գծում կանգնեցնելը չէ, դա բանակի գործառույթն է, քանի որ բանակային ուժերի հզորությունը, հասկանալի է, շատ ավելի մեծ է: Աշխարհագրի խնդիրն է հնարավորինս արագ արգելափակել հակառակորդին, որն արդեն ներխուժել է, կասեցնել նրա ծավալումն ու ոչնչացնել մեթոդական պայքարով:

Ներկայացված ուղեցույց-ձեռնարկը՝ գիտական, ճանաչողական և տեղեկատվական նպատակներով կազմված է պատերազմի վետերան, ԱՄՆ բանակի երկու մարտական առաքելություններին մասկակցած, համաշխարհային ճանաչում ունեցող, քաղաքային մարտերի վարման գծով խորհրդատու, փորձագետ, պահեստի գնդապետ Ջոն Սպենսերի եզրահանգումների հիման վրա¹: Ուղեցույց-ձեռնարկի դրույթները խորհուրդ չի տրվում օգտագործել առանց հասկանալու և մեկնաբանելու, իսկ կիրառման դեպքում անհրաժեշ է մոտենալ ստեղծագործաբար և առողջ քննադատությամբ:

¹ [Мини-Пособие по защите города в современных условиях](#)

1. ՈՒՂԵՑՈՒՅՑ ՔԱՂԱՔԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Պաշտպանությունը պատերազմի ուժեղագույն ձևերից է: Հարձակվողը պետք է մոտենա ձեզ, և դուք պետք է դիրքերում պատրաստ լինեք: Նա պետք է անցնի փողոցը, որպեսզի հարձակվի ձեզ վրա: Ոչնչացրեք նրան փողոցներում և ծառուղիներում:

2. Երբեք մի դադարեք պաշտպանությանը պատրաստվել: Նույնիսկ երբ դուք մարտ եք վարում, պետք է շարունակեք բարելավել ձեր դիրքերը:

3. Ստիպեք հարձակվողին գնալ այնտեղ, որտեղ դուք եք ցանկանում, ոչ թե այնտեղ, որտեղ նա է ուզում: Կառուցեք հնարավորինս բարձր բարիկադներ: Արգելափակեք բոլոր փողոցները, նրբանցքները, դռներն ու պատուհանները: Քաղաքը վերածեք պարսպապատ ամրոցի, որը կստիպի հակառակորդին ընկնել ձեր պատրաստված թակարդը:

4. Օգտագործեք բետոնը: Դա ձեր ամենամեծ պաշտպանիչ ռեսուրսն է: Մի օգտագործեք փայտ և ավազի պարկեր, դրանք թույլ են: Պողպատե ձողերով (ամրաններով) ամրացված բետոնը ամենաուժեղ նյութերից է: Դրանից մարտական դիրքեր և բարիկադներ կառուցեք:

5. Միշտ քողարկեք ձեզ, ձեր դիրքը, ձեր զենքը: Միշտ նկատի ունեցեք, որ հակառակորդը կարող է ձեզ վերնից տեսնել: Եթե նա նկատի ձեզ, ապա կհարվածի հրթիռներով, ռումբերով և ականանետներով: Եթե դուք անընդհատ թաքնվում եք, շարժվում եք շենքերի ներսում, շենքերի միջև բրեզենտով քողարկված էկրանի տակ, հակառակորդը չի կարողանա հարվածել ձեզ:

6. Օգտագործեք ցանկացած ստորգետնյա շինություն չկա, սկսիր փորել: Որպես կանոն, հարձակվողը ումբակոծում է հարձակումից առաջ: Դուք կարող եք օգտագործել ստորգետնյա անցուղիները թաքնվելու, փախչելու, ինքներդ ձեզ պաշտպանելու, պաշարները պահելու, տեղաշարժվելու և հակազդողները համար:

7. Անակնկալի բերելն ամեն ինչ է: Հարձակվողը չի կարող տեսնել բետոնի միջով: Դուք եք որոշում, թե երբ և որտեղ է տեղի ունենալու մարտը: Թշնամին խորապես վախենում է քաղաքային դիպուկահարներից: Թող նա հավատա, որ յուրաքանչյուր պատուհանում դիպուկահար կա:

8. Գործեք խմբերով: Մեկ մարտիկը շատ քիչ է: Գործեք առնվազն 3-5 հոգանոց խմբերով:

9. Միշտ հարձակվեք պաշտպանված և ծածուկ դիրքից: Կարևոր չէ՝ ինչ-որ բան ես նետում, թե կրակում ես, կարևորը այդ ամենը անել շենքի ներսից, բարձր կամ ցածր հարկերից, փլատակների կույտերի հետևից՝ կամ «գետնի տակից հանկարծ հայտնվելով»:

10. Հարձակումից հետո միշտ ունեցեք նահանջի (ետ քաշվելու) ծրագիր: Մենյակների և շենքերի միջև տեղաշարժվելու համար պատերին, հատակին և առաստաղին անցուղիներ ստեղծեք: Տարհանման համար թունելներ փորեք շենքերի և տների տակ: Հարձակման դիրքերի միջև շատ անցումներ սարքավորեք: Նախապես ամենուր տեղադրեք պաշարները՝ փամփուշտները, նռնակները, ռեակտիվ նռնակները, ջուրը և այլն:

11. Թույլ մի տվեք, որպեսզի ձեզ անակնկալի բերեն: Թշնամին վախենում է քաղաքային մարտերից: Նա կփորձի շրջացել ձեզ: Մարտիկների ավելի քան 2/3-ը երբեք չպետք է միաժամանակ քնեն:

12. Խմելք ջուր: Դուր չեք կարող պայքարել, եթե դուք մեռած եք: Առանց ջրի կարելի է ապրել ընդամենը 3 օր, իսկ առանց սննդի՝ 3 շաբաթ: Մաքրել ցանկացած ջուր (եռացնել, ավելացնել ախտահանող նյութեր կամ յոդ):

13. Լվացվեք: Հետևեք ձեր հիգիենային: Հիվանդությունները կարող են ձեզ ավելի շուտ սպանել, քան թշնամու գնդակները: Երբ ուտում և խմում եք, համոզվեք, որ ձեր զուգարանները գտնվում են ավելի քան 40-ից 100 մետր հեռավորության վրա: Թույլ մի տվեք, որ ճանճերը դիպչեն ձեր սննդին:

14. Դուք պետք է հավատարիմ մնաք պատերազմի օրենքներին: Դուք պետք է կրեք տարբերանշաններ՝ ձեզ որպես մարտիկներ ճանաչելու համար:

2. ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՐՁԱԿՄԱՆ 8 ԿԱՆՈՆ

Կան կանոններ, որոնք սահմանափակում են զինվորականների հարձակումը քաղաքի վրա: Խելացի պաշտպանը նախատեսում է առավելագույնի հասցնել և օգտագործել յուրաքանչյուր կանոն հարձակվողի դեմ: Այդ կանոններն են.

1. **Քաղաքի պաշտպանն առավելություն ունի:** Որպեսզի հակառակորդը գրոհի լավ կահավորված և ճիշտ կառուցված դիրքերին անհրաժեշտ է շատ ավելի մեծ ուժ:

2 **Կառուցապատված քաղաքը հակառակորդի առավելությունները հետախուզության և դիտարկման գործում նվազեցնում է, ինչպես նաև նվազեցնում է հակառակորդի օդային միջոցների կիրառման և կրակային խոցման արդյունավետությունը:**

3. **Հակառակորդի հարձակման դեպքում պաշտպանն ունի դիտարկման և հանկարծակիության բերելու առավելություն, քանի որ հետախուզության և շարժման ժամանակ հարձակվող կողմը ապաքողարկվում է:** Պաշտպանի ամենամեծ մարտավարական առավելությունն այն է, որ նա կարող է թաքնված մնալ շենքերի ներսում և նկուղներում:

4. **Շինություններն ամրացված բունկերներ են:** Քաղաքները լի են կառույցներով, որոնք իդեալական են պաշտպանական նպատակների համար: Խոշոր կառավարական, գրասենյակային կամ արդյունաբերական շենքերը հաճախ կառուցվում են հաստ երկաթբետոնից, որոնք գրեթե անթափանց են տարատեսակ զինատեսակների համար:

5. **Շենք ներթափանցելու համար հարձակվող կողմը պետք է օգտագործի ծանր զենքեր և պայթյուններ:** Քաղաքի ամրացված շենքերի վրա հարձակվելու հիմնական ժամանակակից մեթոդներն են այն ոչնչացնելը կամ շենքը տարբեր զինամթերքներով պայթեցմանը «պատրաստելը», այնուհետև հետևակայիններին ուղարկելը, որպեսզի ներթափանցեն շենք և անհրաժեշտության դեպքում ամբողջությամբ մաքրեն այն:

6. **Քաղաքի տարածքում պաշտպանները պահպանում են տարաշարժման հարաբերական ազատություն:** Ըստ մարտեր վարելու պահանջի, տեղաշարժը հեշտացնելու համար, պաշտպանները պետք է նախապատրաստեն տեղանքը, այսինքն՝ մարտական դիրքերը կապեն շենքերի միջով և ստորգետնյա անցուղիներով, հարձակվող կողմին դարանակալելու նպատակով խոչընդոտներ ստեղծելով սահմանափակել քաղաքային խիտ միջավայրի ուղիները:

7. **Ներքնահարկերը (նկուղները) փրկում են պաշտպանին:** Պաշտպանները կարող են օգտագործել գոյություն ունեցող թունելները կամ մարտական դիրքերը միացնելու համար փորել նորերը, պատսպարվել օդային հարվածներից կամ հակառակորդի գրոհը կասեցնելու համար ականապատել դրանք :

8. **Ո՛չ հարձակվող կողմը, ո՛չ էլ պաշտպանները չեն կարող կենտրոնացնել իրենց ուժերը:** Քաղաքային խիտ տեղանքում պաշտպանությունը սահմանափակում է

ինչպես արագ տեղաշարժը, այնպես էլ կարևորագույն տարածքներում հսկայական ուժեր կենտրոնացնելու ունակությունը:

3. ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 7 ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԸ

Պաշտպանության յոթ տարրերը կիրառվում են ցանկացած պաշտպանության ընթացքում՝ անկախ մասշտաբից կամ միջավայրից: Քաղաքի պաշտպանության դեպքում պաշտպանը պետք է մտածի, թե ինչպես կարելի է տեղանքը նախապատրաստել և օգտագործել այնպես, որպեսզի պաշտպանները կարողանան անել այն, ինչ ուզում են՝ միաժամանակ թույլ չտալով, որ հակառակորդը անի այն, ինչ նա է ուզում անել:

Յոթ հիմնական տարրերը հետևյալն են:

1. **Նախապատրաստում:** Երբ քաղաքի պաշտպանը որոշի կռվել, նա պետք է սկսի պլանավորել և պատրաստել քաղաքի տարածքը ըստ իր ծրագրի: Քաղաքի պաշտպանը երբեք չի դադարում պատրաստվել: Նույնիսկ երբ մարտ է ընթանում, որոշ մարտիկներ կարող են կրակել, իսկ մյուսները շարունակում են ստեղծել խոչընդոտներ, սարքավորել դիրքեր և այլն:

2. **Ճկունություն:** Ամբողջ պաշտպանությունը պետք է ճկուն լինի հարձակվող կողմի գործողություններին հարմարվելու համար: Սա կարևոր է քաղաքի ամբողջ պաշտպանության համար մինչև առանձին թաղամաս:

3. **Անվտանգություն:** Պաշտպանները պետք է ապահովեն քաղաքի շրջանաձև անվտանգությունը: Ցանկացած մարտական դիրքի համար անհրաժեշտ է մեկից ավելի մարդ:

4. **Շարակարգում:** Կարողացեք ոչնչացնել հակառակորդին գոտիներով կամ օղակներով քաղաքի կենտրոնից որքան հնարավոր է հեռու:

5. **«Ցիբուցան անել»:** Օգտագործեք քաղաքը որպեսզի ջախջախեք հակառակորդի կազմավորումները, հարձակվողի շարայույնները, առանձնացրեք տանկերը հետևակից:

6. **Տարաշարժ:** Օգտագործեք ինչպես կրակը, այնպես էլ պաշտպանների արագ տեղաշարժը:


7. **Զանքերի կենտրոնացում:** Պատրաստ եղեք վճռական պահին հարձակվել հակառակորդի վրա մեծ խմբերով:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Կուտակեք պաշարներ

Քաղաքում մարտեր վարելը պահանջում է չորս անգամ ավելի շատ զինամթերք, քան դաշտային պայմաններում:


Բացի հակատանկային միջոցներից, ինչպիսիք են Javelin-ը և NLAW-ը, պաշտպաններին անհրաժեշտ են մեծ քանակությամբ փամփուշտներ, նոնակներ, հակատանկային և հակահետևակային ականներ, ԱԹՄ-ներ (դրոններ), ջուր, չփչացող սնունդ և վառելիք (սննդի, մեքենաների, գեներատորների համար):



4.2. Դուք ունեք քանակական առավելություն

Քաղաքի պաշտպանությանը նախապատրաստված պաշտպաններն առավելություն ունեն։ 2016 թվականին ավելի քան 100.000 մարտիկներին 9 ամիս պահանջվեց Մոսուլը գրավելու համար, որտեղ գործում էին 5,000-ից 10,000 զինյալներ։ Ըստ ռազմական արվեստի դրույթների, քաղաքը գրավելու համար հարձակվող կողմին անհրաժեշտ է 3-5 անգամ ավելի շատ մարտիկներ, քան անտառապատ կամ բաց տարածքում հարձակման ժամանակ։ Այսինքն, հակառակորդին անհրաժեշտ է 5 և ավելի հարձակվող զինվոր 1 պաշտպանվող զինվորի դիմաց։

Հակառակորդի հարձակման դեպքում պաշտպանությանը նախապատրաստված քաղաքի դիմակայման աստիճանը



5. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Դուք չեք կարող մարտնչել, եթե մեռած եք: Առաջ շարժվող հակառակորդի դեմ պայքարելու համար պատրաստեք քաղաքի տարածքը, որպեսզի ձեզ ապահովի առավելագույն պաշտպանություն և անվտանգություն:

5.1. Քաղաքի վրա հարձակման փուլերը

Պաշտպանական կառույցները ոչնչացնելու և քաղաքի պաշտպանական ուժերը բարոյալքելու նպատակով քաղաքի վրա հակառակորդի հարձակման առաջին փուլը կլինի պաշտպանվողների բոլոր հայտնի դիրքերի ուժակոծումը (հետախուզված շենքեր/վայրեր կամ այն ամենը ինչը կարելի է տեսնել երկնքից): Այս փուլում պետք է ամեն ջանք գործադրել դիրքերը քողարկելու (թաքցնելու) համար: Կարևոր է իմանալ տարիանման և պատրաստված դիրքեր վերադառնալու ուղիները:

Հաջորդ փուլում, երբ հարձակվողները մոտենան քաղաքին, կսկսվի քաղաքի բոլոր կառույցների ուժեղ ուժակոծությունը՝ միտում ունենալով, որ նրանք հանձնվեն: Դա կարող է տևել մի քանի օր, և հենց այդ ժամանակ ապաստարանները (թաքստոցները) ունենալու են իրենց որոշիչ նշանակությունը գոյատևման, զենքի և պաշարների պահպանման գործում: Պաշտպանները պետք է նաև իմանան հակառակորդի գտնվելու վայրը (ինչ հեռավորության վրա է գտնվում):

Քաղաքի վրա հարձակման երրորդ փուլում, եթե հակառակորդի զորքերը քաղաք ներխուժելու համար փորձեն շարժվել դեպի քաղաքի ծարամասեր, ապա կրակը վարվելու է ուղիղ և կիսաուղիղ նշանառությամբ: Սա վտանգավոր ժամանակ է, քանի որ պաշտպանները պետք է միաժամանակ հարձակվեն և պահպանեն իրենց կենսունակությունը: Պաշտպանները կարող են «հավել» հարձակվողներին թույլ տալով նրանց այնքան մոտենալ, որ նրանք այլևս չկարողանան կիրառել հրետանին՝ վախենալով ոչնչացնել յուրայիններին:

Հարձակվող հակառակորդի գործողությունների նախորդ փուլերի արդյունքում առաջացած փլատակներն ու ավերակները, պետք է հանդիսանան մարտական դիրքերի «ամրացման» գրավական:

5.2. Օդային դիտարկումից պաշտպանվելու համար ծածկեք ամեն ինչ

Դուք պետք է անտեսանելի մնաք հակառակորդի համար: Եթե տեսանելի լինեք, ձեզ ուժակոծելու է հակառակորդի ավիացիան և հրետանին: Ծածկվեք ձեռքի տակ գտնվող առարկաներով (բրեզենտով, սավաններով, պլաստիկով), որպեսզի փողոցից կամ երկնքից անտեսանելի լինեք:



5.3. Ստորգետնյա հաղորդակցություններ

Ստորգետնյա հաղորդակցությունները ծառայում են որպես քաղաքային մարտի հզոր գործիք: Նրանք թույլ են տալիս պաշտպաններին խուսափել ռումբերից, ապաստանել մարտիկներին, պահել և պաշտպանել պաշարները, շարժվել աննկատ և հարձակվել հակառակորդի վրա:



Եթե առկա չեն ստորգետնյա հաղորդակցությունները, փորեք ինքներդ: Դուք կգարմանաք թունելի խորությունից, որը խաղաղ բանակիչները կարող են փորել ընդամենը մի քանի օրվա ընթացքում: Փորեք ապաստարաններ, շենքերի տակով անցուղիներ և թաքստոցների համար ապահով վայրեր:

5.4. Բարիկադներ, բարիկադներ, բարիկադներ

Քաղաքի տարածքը պետք է պատրաստ լինի հակառակորդի հարձակումը դանդաղեցնելուն կամ կասեցնելուն: Հակառակորդին տարածքի հասանելիությունից զրկելու համար պետք է ստիպել նրան որպեսզի տեղաշարժվի նախօրոք սարքավորված թակարդների և դարանների միջով:

Կառուցեք մի քանի պաշտպանական գիծ: Պատրաստեք քաղաքի պաշտպանությունը լրիվ շրջանագծերով: Կառուցեք ամրություններ: Տեղադրեք շերտ առ շերտ տարատեսակ խոչնդոտներ և բլոկներ: Տեղադրեք բարիկադներ յուրաքանչյուր փողոցում: Արագությունը՝ անվտանգությունն է: Դանդաղ շարժվող մեքենան կամ զինվորը ավելի հեշտ է խոցվում կամ ոչնչացվում:



- մինչև կենտրոն ճեղքում՝ 30 րոպե

- բազմաթիվ բարիկադներ
- օգտագործվում է մեծ քանակությամբ վառելիք
- դանդաղ = հեշտ նշանատել
- պաշտպանական գծեր բոլոր լայնակի կտրվածքների առջև



Ինչպես անել



Մեքենաները
կարող են
անցնել



Նյութեր



Քաղաքի պաշտպանության ցանկացած իրադրությունում շարունակեք պատ-
րաստվել: Նույնիսկ մարտի ժամանակ շարունակեք բարելավել ձեր դիրքերը: Մի
նստեք կամ կանգնեք դրսում: Անցակետերում ապաստարաններ կառուցեք:

5.5. Փորեք թույնեղներ




Բացվածքներ, կափարիչներ և թուներ

5.6. Արգելափակոցներ (արգելապատնեշներ) փողոցներում

Դուրս եկեք փողոց և կառուցեք արգելապատնեշներ: Սկսեք ցանկացած քանդված կամրջից: Արգելափակեք այն ավտոբուսներով, բեռնատարներով, մեքենաներով, բեռնով, փայտով, աղբով, ամեն ինչով: Դրանից հետո արգելափակեք այն վայրերը, որտեղ երկու կողմերում էլ բարձր շենքեր կան:

Դուք պետք է քաղաքը վերածեք ամրոցի և փակեք դարպասները: Արգելափակեք յուրաքանչյուր փողոց, նրբանցք, մայթ, առաջին հարկի դռներն ու պատուհանները: Դրա համար օգտագործեք քաղաքում առկա նյութերը:




Օգտագործեք **բեռոնը** որպես հիմնական պաշտպանիչ նյութ: Պողպատե ձողերով (արմատուրով) ամրանավորված բեռոնը տասնյակ անգամ ավելի լավ է, քան ավազի պարկերը: Օգտագործեք մանրացված խճաքար, քար, աղյուս:



Օգտագործեք առկա բեռոնն արգելքները: Ժամանակակից քաղաքներում հաճախ հանդիպում են բեռոնն խոչընդոտներ տրանսպորտային միջոցների անցա-

կետերի կամ ենթակառուցվածքների պաշտպանության համար: Այս խոչընդոտները պատրաստի դաշտային ամրություններ են: Պողպատե ոգնիները նույնպես լավն են:

Եթե ունեք **փշալարեր**, օգտագործեք դրանք: Ամրացրեք մեկմեկու և կազմեք փշալարերի եռաշերտ արգելափակոց: Տեղադրեք շենքերի ու շինությունների միջև: Եռակի փշալարերը կարող են կանգնեցնել տրանսպորտային միջոցների մեծ մասը, նույնիսկ դանդաղեցնել տանկի ընթացքը:



Կնճռածալք տեսքով եռաշերտ պատնեշ

Ապամոնտաժեք վնասված կառույցները, ստեղծեք փլատակներ և օգտագործեք բետոնի, արմատուրաների, քարերի, աղյուսների կամ կոշտ բեկորների բեկորներ:

Եթե փորելու համար ժամանակ և միջոցներ ունեք, փորք հակատանկային փոսեր (խրամներ), քաղաքի ամենախիտ հատվածների (հատկապես մուտքերի) շուրջ արգելքներ տեղադրեք, հաշվի առնելով քաղաքացիական բնակչության կարիքները հոգալուն չխոչնդոտելու հանգամանքը: Նպատակը այն է որպեսզի քաղաքի շրջաններում ավելացվի **արգելափակոցների (արգելապատնեշների)** խտությունը:

Թաղամասերում դանդաղեցրեք կամ դադարեցրեք տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքը կամ երթևեկությունը: Արգելափակեք բոլոր փողոցները: Դանդաղեցրեք տրանսպորտային միջոցների շարժը, որպեսզի կարողանաք կրակել դրանց վրա կամ Մոլոտովի կոկտեյլներ նետել: Դուք պետք է լինեք շենքերի ներսում: Փողոցում զենք ունեցողին հայտնաբերելու դեպքում հակառակորդը կարող է ոչնչացնել հրթիռներով կամ հրետանիով:




Քաղաքի փողոցներում սարքավորված բլոկները՝

- դանդաղեցնում են հակառակորդի տեղաշարժը,
- հակառակորդը ծախսում է մեծ քանակությամբ վառելիք,
- հեշտ է նշանառել

Եթե կա փողոց, որը դուք դեռ պետք է օգտագործեք, կառուցեք "S"-ձև խոչնդոտներ կամ օձագալարք, որը կդանդաղեցնի մեքենայի ընթացքը: Մտածեք հսկիչ-անցա-

գրային կետի մասին, որը կարող էք կառուցել, եթե ցանկանում եք վնասագերծել դիվերսանտներին, նախքան հարձակվողները կհասնեն ձեր գտնվելու վայրը: Չպետք է լինեն ճանապարհներ, որոնք թույլ են տալիս ազատ, արագ շարժը դեպի քաղաք:



6. ԳՐՈՆ, ԳՐՈՆ, ԳՐՈՆ

6.1. Ընդհանուր խորհուրդներ

Թեև քաղաքի պաշտպանության նպատակը կարող լինել ոչ բոլոր հարձակվողներին ոչնչացնելը, բայց մշտական / ընտրովի գրոհները հասնում են քաղաքը պահելու նպատակին: Դուք պետք է յուրաքանչյուր փողոց վերածեք մատակարար, որտեղ հակառակորդը պետք է մահվամբ կերակրի յուրային զինվորներին:


Կառուցեք հենակետեր քաղաքի հիմնական պողոտաների երկայնքով:

Պարտադիր պետք է ունենալ տարհանման ուղիներ (օրինակ՝ հարևան շենքի ճեղքվածք): Հենակետերը մաքրելու համար կարող են օրեր պահանջվել:

Մի օգտագործեք ապակուց կամ փայտից պատրաստված շենքեր, որոնք կարող են կոտրվել կամ այրվել:

Պատրաստեք թունելներ և ճեղքվածքներ (շենքերի ներքին և արտաքին պատերին ստեղծեք անցքեր, որոնք թույլ կտան զինվորներին շարժվել շենքերի արտաքին պատերի և ներքին տարածքների միջով): Ճեղքվածքների օգտագործման մարտավարությունը քաղաքների առավել գերիշխող, կրկնվող պաշտպանական տեխնիկաներից մեկն է, որը բեռնուն կառույցներում թույլ է տալիս տեղաշարժվել և հարձակվել աննկատ ու անվտանգ: Թունելները նաև թույլ են տալիս խուսափել հակառակորդի գնդակոծությունից:

ՄԿՆԵՐԻ ՈՐՋԸ ՕՐԹՈՆ ՔԱՂԱՔՈՒՄ*



*** Մանրագրություն:** 1943 թվականի վերջին գերմանացիները Օրթոն քաղաքում քողարկել էին գնդացիները և հակատանկային կրակակետերը, ինչը ավելի ու ավելի էր դժվարացրել կանադացիների զրահատեխնիկայի և հետևակի տեղաշարժը: Տնից տուն մարտերը կատաղի էին, և կանադացիները որոշեցին կիրառել այսպես կոչված «մկների դարանման» մարտավարությունը, որը նախկինում հազվադեպ էր կիրառվում: Այս մարտավարության իմաստն այն էր, որ մեծածավալ հակատանկային PIAT կամ Teller ականների կիրառմամբ շենքերի պատերին առաջացնել մեծ բացվածքներ, քանի որ Օրթոնում շենքերի մեծամասնությունը մեկը մյուսից անջատված էր հարակից պատերով: Այնուհետև առաջացած բացվածքներում (մկների որջի միջոցով) կանադացիները նետելով նոնակներ շարունակեցին զրոհը՝ մաքրելով վերին կամ ստորին հարկի աստիճանները և հետպնդելով հակառակորդին՝ մերձամարտի բռնկեցին:

Թշնամու զորքերին անակնկալի բերելու նպատակով մկների որջի մարտավարությունը կիրառվել է նաև պատերի միջով հարևան սենյակներ թափանցելու համար: Ի դեպ այս մարտավարությունը բազմիցս է կիրառվել, քանի որ փողոցային մարտերի ժամանակ ուղղակի գրոհները զորքին ծանր կորուստներ է պատճառում:

Բացի այդ «Մկների որջի» օգտագործումը թույլ էր տալիս զինվորներին շարժվել քաղաքով, շենք առ շենք՝ առանց փողոց դուրս գալու: Թեև որոշ աղբյուրներ այս մարտավարությունը վերագրում են կանադական զորքերին, սակայն, դեռևս 1941 թվականին բրիտանական ուսումնական ֆիլմը տեսականորեն անդրադարձել էր մարտավարությանը: Կանադացիները, անշուշտ առաջինն էին, որ գործնականում կիրառելով կյանքի կոչեցին մարտավարությունը:



Եթե ժամանակը թույլ տալիս, ստեղծեք երկարաժամկետ կրակային կառույցներ (կետեր, ԵԿԿ-ներ) կամ թաքնված բունկերներ: Դրանք պետք է ունենան բետոնապատ տանիք և քողարկված լինեն:


Դուք կարող եք ծանր զենքի համակարգեր տեղադրել շենքերի ներսում:

Ձենքի մեծածավալ նմուշները կարող են ապամոնտաժվել և հավաքվել շենքի վերին հարկում, որպեսզի ապահովվեք լայն տեսադաշտ և ուղղորդման անկյուններ: Սա նաև ստեղծում է պաշտպանություն զինվորի համար, որը նույնական է

բունկերին և կարող է հակառակորդին մեծ կորուստներ պատճառել:


Սարքավորեք պահոցներ այն ամենով, ինչ ձեզ անհրաժեշտ է մարտնչելու համար, որտեղ էլ որ մարտը վարեք՝ առաջին, երկրորդ և երրորդ դիրքերում: Քաղաքային կառույցները մեծ առավելություններ ունեն հնարավոր մարտական դիրքերում գաղտնի և պաշտպանված մատակարարման կետեր կահավորելու համար:

Հակազորոհելու համար օգտագործեք այն փողոցների շենքերը, որոնք մոտ են ճանապարհներին: Ավելի լավ է հարձակվել վերին հարկերից, քանի որ տանկերը չեն կարող այդքան վեր բարձրացնել իրենց փողերը: Բացի այդ, հակառակորդի համար առավել դժվար է անընդհատ վեր նայելով մարտնչել: Պաշտպանները պետք է թաքնված մնան շենքի ներսում մինչև հարձակման պահը, իսկ հակառակորդի հարձակումից հետո փոխեն դիրքերը:



Ոչ մի պատճառ չկա, որ իր դիրքում գտնվող քաղաքի պաշտպանն երկնքից կամ փողոցից տեսանելի լինի հակառակորդին: Հրաձգային զենքերի փողերը պատուհաններից դուրս մի ուղղեք: Հեռու մնացեք պատուհաններից և տեսանելիությունը նվազեցնելու համար կրակեք սենյակների ներսից:

Ռազմիկները վախենում են դիպուկահարներից: Յուրաքանչյուր պատուհան դարձրեք հնարավոր դիպուկահարի դիրք: Կրակը վարեք շինությունների և շենքերի խորքից դեպի դուրս:



Օգտագործեք հակատանկային դարաններ՝ «հարվածեք և հեռացեք» սկզբունքով: Գրոզնիի համար առաջին մարտի ժամանակ 3-5 մարտիկներից բաղկացած փոքր խմբերը, որոնք զինված էին միայն ԱԿ-47 ինքնաձիգներով, նոնակներով և ՁՀՏՆ-7-ով կամ ՁՀՏՆ-18-ով, կովում էին զրահատեխնիկայի դեմ կա՛մ նկուղներից կա՛մ շենքերի վերին հարկերից: Ռուսական տանկերը և այլ զինատեսակները չէին կարողանում արդյունավետ պատասխան կրակ վարել: Չեչեն գրոհայինները հարվածում էին առաջին և վերջին տրանսպորտային միջոցներին, որպեսզի ուրիշներին թակարդի մեջ գցեն՝ հարվածում էին անշարժացած թիրախներին և անմիջապես հեռանում:

6.2. Կրակային պարկ ստեղծելու 7 պարզ քայլ

Պաշտպանության ամենահզոր մարտավարություններից է կրակային պարկերի ստեղծումը: Դրա համար.

1. Որոշեք հակառակորդի մոտեցման բոլոր հնարավոր ուղիները:
2. Որոշեք, թե ինչ եք անելու / ինչ է փորձելու անել հակառակորդը:
3. Որոշեք, որտեղ է անհրաժեշտ ոչնչացնել հակառակորդին:
4. Պլանավորեք և սահմանեք խանգարումներ (հակառակորդի շարժման դանդաղացում / կանգնեցում):

5. Որոշեք, թե որտեղ թաքնվել և որտեղից կրակել:

6. Պլանավորեք կրակային խոցումը (ներառյալ Մոլոտովի կոկտեյլները):

7. Ծրագիրն իրականացնելու համար մի քանի անգամ մարզեք մարտիկներին:

Կրկին, ձեր կենսունակությունը կարևոր է պայքարի համար, այնպես որ լավ մտածեք, թե որ ուղղությամբ եք կրակելու: Ընտրեք դիրքեր երկար փողոցների երկայնքով բարձրադրի վայրերում, կրակեք և հեռացեք, օգտագործեք դարաններ: Նշան բռնեք ոչ զրահապատ մեքենաների դիմային ապակիներին և դռներին կամ

նշանառեք անպաշտպան զինվորներին: Դիպուկահարները զինվորի ամենամեծ վախերից մեկն են:


Ցանկացած կոմերցիոն ԱԹՍ կարող է օգտագործվել հարձակվողներին հայտնաբերելու և պաշտպանների վրա հանկարծակի հարձակումը կանխելու համար: Դրանք կարող են նաև ստեղծել վախի մթնոլորտ հակառակորդի շրջանում:

6.3. Մոլոտովի կոկտեյլ

Մոլոտովի կոկտեյլը կարող է արդյունավետ լինել, եթե այն ճիշտ օգտագործվի: Մտածեք, թե որտեղ եք կանգնելու նետելու և արագ հեռանալու համար:

Առավել իդեալական տարբերակն այն է, որ պատուհաններից նետեք տրանսպորտային միջոցների վրա: Վերևից տրանսպորտային միջոցներն առավել խոցելի են, բայց եթե դա զրահապատ մեքենա է, ապա ընտրեք, թե որտեղ է պետք հարվածել:

Տեխնիկայի խոցելի տեղերն են.



7. ՏԱՆԿԵՐ

Տանկերի թույլ տեղերի, մեռյալ գոտիների, նրանց ոչնչացման եղանակների մասին մանրամասն ներկայացրել ենք «Համագորային մարտում հակառակորդի տանկերն ու թրթուրավոր զրահամեքենաները ոչնչացնելու գործնական խորհուրդներ» հոդվածում:

[https://www.pahak.org/publications/ TANKS-AND-TRACKED-ARMORED-VEHICLES](https://www.pahak.org/publications/TANKS-AND-TRACKED-ARMORED-VEHICLES)


8. ՎԻՐԱՎՈՐՆԵՐԻ ԽՆԱՄՔ

Քաղաքային մարտերը մեծ կորուստներ են բերում ինչպես հարձակվողներին, այնպես էլ պաշտպաններին: Պաշտպանները պետք է պատրաստ լինեն իրենց վիրավորներին տեղափոխել անվտանգ վայր և ապահովել նրանց խնամքը: Դրա համար պետք է պատրաստվեն մեծ քանակությամբ ինքնաշեն պատգարակներ նախօրոք ձեռք բերելով անհրաժեշտ քանակի ձողեր (փայտ/մետաղ/պլաստիկ) և երեսպատման նյութեր (ծածկոցներ, բաճկոններ, բրեզենտ), օրինակ.


8.1. Ծածկոցից և ձողերից պատրաստված իմպրովիզացված պատգարակ

Ծածկոցից և ձողերից պատգարակ պատրաստելու համար կատարեք հետևյալ քայլերը.

1. Բացեք ծածկոցը և մեկ ձողը դրեք կենտրոնի երկայնքով, ապա ծածկոցը ծալեք ձողի վրա:
2. Տեղադրեք երկրորդ ձողը ծալված ծածկոցի կենտրոնում:
3. Ծածկոցի ազատ եզրը ծալեք երկրորդ ձողի վրա և ամրացրեք այն ցանկացած եղանակով:



Ծածկոցից և ձողերից պարաստված պատգարակ



Բաճկոնից և ձողերից պարաստված պատգարակ

8.2. Իմպրովիզացված ատգարակներ բաճկոններից և ձողերից

1. Կոճկեք կոճակները կամ «կայծակաճարմանդները» երկու բաճկոնների վրա:
2. Բաճկոնների թևերը շուռ տվեք:
3. Տեղադրեք ձողերը բաճկոնների շուռ տված թևերի մեջ:

9. ՋՈՒՐ


Քաղաքի պաշտպանը պետք է խմի ջուր: Առանց ջրի կարելի է ապրել ընդամենը մի քանի օր: Խոնավացումը առանցքային է:

Ջրագրկման նշաններն են բերանի չորությունը, հոգնածությունը, գլխացավը, չոր մաշկը, քրտինքի պակասը, բորբոքված աչքերը, մկանների և ստամոքսի սպազմերը, երկար ժամանակ միգելու ցանկության բացակայությունը, և նույնիսկ գիտակցության մթա-գնումն ու նոպաները:

Ջուրը խմելու համար պետք է անվտանգ լինի: Կան մի քանի եղանակներ: Հավաքել անձրևաջուրը կամ հալեցնել ձյունը, որից հետո եռացրել: Մեկ լիտրի համար ավելացնել 2 կաթիլ սպիտակեցնող միջոց (սպիտակեցնող նյութի քիմիական կազմը ներառում է նատրիումի հիպոքլորիտ, որը պարունակում է 95% ակտիվ ձևեր: կաուստիկ սոդա կամ նատրիումի հիդրօքսիդ), կամ 5-10 կաթիլ յոդ:

Եթե վստահ չեք, միշտ մաքրեք ջուրը: Վատ ջուր խմելը կարող է առաջացնել փսխում/լուծ և հանգեցնել ծայրահեղ ջրագրկման և մահվան:

ԻՆՉՊԵՍ ՄԱՔՐԵԼ ՋՈՒՐԸ



10. ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԿԱՄՔ

- ✓ Քաղաքի պաշտպանները պետք է պահպանեն պայքարելու կամքը:
- ✓ Նրանք պետք է պահպանեն հույսը, որպեսզի կարողանան հաղթել և կհաղթեն:
- ✓ Նրանք առավելություն ունեն քաղաքում:
- ✓ Զինվորները պայքարում են իրենց ազգի, ազատության, իրենց ընտանիքների և միմյանց համար:
- ✓ Թույլ մի տվեք, որ վախը ձեզ հաղթի: Միասնաբար պայքարեք փոքր խմբերում: Ձեր խմբում ձևավորված համախմբվածության կապը ներկայացնում է վահան վախի դեմ:
- ✓ Քաղաքի պաշտպանը պետք է վախ ներշնչի հարձակվողին, որպեսզի նա կորցնի կռվելու կամքը: